

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2010Թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ*

ԹԻՎ 1

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2010թ. հունվարին

(%)

	2010թ. հունվարը		
	2009թ. դեկտեմբերի նկատմամբ	2009թ. հունվարի նկատմամբ	2005թ. նկատմամբ
Սպառողական գների ինդեքսը - ընդամենը	101.7	107.0	127.9
<i>այդ թվում՝</i>			
Սպառման ապրանքներ	102.5	105.8	125.3
Պարենային ապրանքներ	103.6	103.3	129.7
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.2	101.8	102.4
Ոչ պարենային ապրանքներ	99.9	116.0	120.5
Ծառայություններ	99.9	109.9	134.1


Սպառողական գներ: 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 1.7% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:

2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գներն աճել են 3.3%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում և ծառայությունների ոլորտում գրանցվել է գների և սակագների 0.1 % նվազում:

2010թ. հունվարին 2009թ. հունվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 107.0%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 103.2%, ոչ պարենային ապրանքներինը՝ 116.0%, ծառայությունների սակագներինը՝ 109.9%:

Սպառողական գների հավելածը 2001-2010թթ. հունվարին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2010թ. հունվարին 2005թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 127.9%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 126.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 120.5%, ծառայությունների սակագներինը՝ 134.1%:

Հանրապետության դիտարկվող քաղաքներում 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է սպառողական գների 1.1-2.6% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Արտաշատում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 1.6%-ով:

Պարենային ապրանքների գներ: 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների 3.6% գնաճ, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել մսամթերքի, ձկնամթերքի, մրգի, բանջարեղենի 3.2-26.0% գնաճը: Դիտարկվող պարենային 13 ապրանքխմբերից 9-ում նշված ժամանակահատվածում արձանագրվել է 0.1-26.0% գնաճ, 2-ում՝ 0.3% գնանկում, իսկ մյուս 2-ում

պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2010թ. հունվարին 2009թ. հունվարի համեմատ արձանագրվել է 2.7%, իսկ 2009թ. դեկտեմբերի համեմատ՝ 26.0% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է լոլիկի 1.9 անգամ, կանաչ պղպեղի 1.8 անգամ, վարունգի 37.1%, կանաչ սոխի 45.6%, խառը կանաչեղենի 50.7% գնաճով: 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սխտորի 0.2%, կաղամբի 2.9%, կարտոֆիլի 3.7%, ճակնդեղի 9.3%, գազարի 11.9%, գլուխ սոխի 19.1%, սմբուկի 21.2% գնաճ: Հանրապետության դիտարկված քաղաքներում արձանագրվել է Բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբի 14.0-40.6% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ աճել է 25.1%-ով:

Մրգի ապրանքախմբում 2010թ. հունվարին 2009թ. հունվարի համեմատ արձանագրվել է 7.4%, իսկ 2009թ. դեկտեմբերի համեմատ՝ 7.0% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է խնձորի 21.0%, ադամաթզի 21.6%, տանձի 22.5%, նռան 32.7%, արքայանարնջի 43.2% գնաճով: 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է կիտրոնի և խաղողի՝ համապատասխանաբար 5.1% և 5.6% գնաճ, իսկ նարնջի և մանդարինի գները նշված ժամանակահատվածում նվազել են 19.4% և 0.2%-ով: Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում մրգի գներն աճել են 1.0-22.7%-ով (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գյումրիում), իսկ ք. Եղեգնաձորում արձանագրվել է 2.0 % գնանկում: Մայրաքաղաքում մրգի գներն աճել են 6.8%:

Մսամթերքի ապրանքախմբում 2010թ. հունվարին 2009թ. հունվարի համեմատ գրանցվել է 5.9%, իսկ 2009թ. դեկտեմբերի համեմատ՝ 3.2% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է հանրապետությունում տավարի և ոչխարի մսի՝ համապատասխանաբար 6.9% և 8.3% թանկացմամբ: Խոզի մսի գինը նշված ժամանակահատվածում նվազել է 0.5%-ով: Հանրապետության դիտարկված քաղաքներում 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է մսամթերքի 1.0-4.9% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Մարտունիում: Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 3.1%-ով:

2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է ոչ ոգելից խմիչքի, ոգելից խմիչքի և ծխախոտի, կենդանական և բուսական յուղերի, կաթնամթերքի, հրուշակեղենի, այլ մթերքի, ձկնամթերքի 0.1-3.4% գնաճ: Շաքարավազի, սուրճի, թեյի, կակաոյի գները նշված ժամանակահատվածում նվազել են 0.3%-ով, իսկ հացամթերքի և ձվի ապրանքախմբերում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.1% գնանկում: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել է բենզինի դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 2.1% և 0.1% գնանկում: 2010թ. հունվարին 2009թ. հունվարի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 39.8% և 25.2%-ով, իսկ 2005թ. համեմատ՝ 9.9% և 17.7%-ով:

Կոշիկեղենի, լվացող միջոցների, այգեգործական ապրանքների, կահույքի, տեքստիլեղենի, ոսկերչական ապրանքների ապրանքախմբերում 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 1.1-0.2% գնանկում: Դրան զուգընթաց, հանրապետությունում արձանագրվել է կենցաղային էլեկտրաապրանքների 0.1%, անձնապիտո ապրանքների 0.2%, խոհանոցային սպասքի 0.4%, հագուստի և գործվածքի 0.5%, շինանյութերի 0.5%, գեղահարդարման ապրանքների 0.7%, վառելիքի 2.2%, մշակույթի ապրանքների 3.6% գնաճ, իսկ գորգեղենի և դեղամիջոցների ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:


Երևան, Արտաշատ, Վանաձոր և Թալին քաղաքներում 2010թ. հունվարին դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.8-0.1%-ով (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Արտաշատում): Դիտարկված 5 քաղաքներում արձանագրվել է 0.2-0.7% գնաճ, իսկ մյուս 2 քաղաքներում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.2%-ով:

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 0.1% նվազում, ինչը հիմնականում մշակույթի ոլորտի և տրանսպորտի ծառայությունների սակագների՝ համապատասխանաբար 2.2% և 1.4% գնանկման արդյունք է: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է կենցաղային բնույթի 0.4%, հանրային սննդի 2.0%, հանգստի կազմակերպման 3.5% ծառայությունների սակագների հավելաճ, իսկ բնակարանային-կոմունալ, բուժապասարկման, կապի, կրթության համակարգի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 0.2-0.1% նվազում, 4 քաղաքներում՝ 0.1-0.3% հավելած, իսկ Հրազդան, Չարենցավան քաղաքներում ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2009թ. դեկտեմբերի 30-ին, 2010թ. հունվարի 11-ին և 20-ին կամ մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 11 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2010թ. հունվարին
(նախորդ ամսվա նկատմամբ,%)



Արտարժույթի շուկա: 2010թ. հունվարին 2009թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 1.7% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի (հունվարի 11-29-ի դրությամբ) 0.8% նվազումով (ՀՀ դրամն արժեվորվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է նմանատիպ միտում. սպառողական գներն աճել են 1.2%-ով, իսկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը նվազել է 0.8%-ով: 2010թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 377.59 դրամ, ինչը 23.6%-ով գերազանցել է 2009թ. հունվարի համապատասխան ցուցանիշը (305.50 դրամ):

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝

Ս. Մնացականյան

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում
2009թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին՝

(%)

	2009 թ.												2009թ. դեկտեմբերը 2008թ. դեկտեմբերի նկատմամբ
	հուն- վարը	իետր- վարը	մարտը	ապ- րիլը	մա- յիսը	հու- նիսը	հու- լիսը	օգոս- տոսը	սեպ- տեմ- բերը	հոկ- տեմ- բերը	նոյեմ- բերը	դեկտեմ- բերը	
	նախորդ ամսվա համեմատ												
Ավստրիա	99,4	100,5	100,2	100,2	100,1	99,9	99,6	100,4	100,2	100,1	100,2	100,3	101,1
Բելգիա	98,1	102,3	99,4	100,3	99,9	99,9	98,4	102,1	99,6	100,0	100,2	100,2	100,3
Բուլղարիա	100,4	100,4	99,7	100,5	100,0	100,1	99,9	100,1	99,8	100,2	100,2	100,3	101,6
Հունգարիա	100,7	100,8	100,5	100,9	101,5	100,0	101,4	99,5	99,8	99,8	100,5	99,8	105,4
Գերմանիա	99,4	100,7	99,8	100,1	99,9	100,4	99,9	100,3	99,5	100,1	99,8	100,9	100,8
Հունաստան	99,5	98,9	102,0	100,4	100,2	99,9	99,3	99,2	101,9	100,5	100,6	100,1	102,6
Դանիա	99,6	101,0	100,4	99,9	100,4	100,2	99,4	100,3	100,2	100,0	100,0	99,8	101,2
Իռլանդիա	99,2	100,2	100,1	100,1	99,6	100,0	99,2	100,2	99,6	99,8	99,9	99,5	97,4
Իսպանիա	98,7	100,0	100,2	101,0	100,0	100,5	99,2	100,4	99,8	100,7	100,5	100,0	100,9
Իտալիա	98,3	100,2	101,2	100,6	100,2	100,2	98,8	100,2	100,7	100,4	100,1	100,2	101,1
Կիպրոս	97,7	100,0	101,4	100,9	100,7	100,1	98,6	100,2	100,8	100,9	100,7	99,6	101,6
Լատվիա	102,1	101,1	100,1	99,6	99,6	99,5	99,4	99,0	99,7	99,7	99,3	99,5	98,6
Լիտվա	102,6	100,3	100,0	99,9	99,8	99,7	99,2	99,8	100,6	99,6	100,0	99,7	101,2
Լյուքսեմբուրգ	98,9	101,8	99,9	100,5	100,3	100,7	99,1	101,3	99,9	99,8	100,6	99,9	102,5
Սալթա	97,8	100,8	101,5	102,3	100,2	99,9	99,9	100,6	99,8	99,6	97,4	99,8	99,6
Նիդերլանդներ	100,0	101,0	101,2	100,3	100,1	99,6	98,4	100,2	100,5	100,3	99,9	99,3	100,7
Լեհաստան	100,4	100,8	100,8	100,6	100,6	100,2	100,3	99,6	100,0	100,2	100,3	100,0	103,8
Պորտուգալիա	99,1	100,0	100,8	100,4	99,8	100,2	99,6	99,8	99,9	100,0	100,1	100,2	99,9
Ռումինիա	101,2	100,8	100,5	100,3	100,0	100,2	99,9	99,8	100,4	100,4	100,7	100,3	104,7
Սլովակիա	100,3	100,0	99,7	99,9	100,1	100,0	99,9	99,8	99,9	100,2	100,3	99,9	100,0
Սլովենիա	99,7	100,6	100,8	100,2	100,6	100,5	99,2	100,1	99,9	100,1	100,8	99,6	102,1
Միացյալ Թագավորություն (Մեծ Բրիտանիա)	99,3	100,9	100,2	100,2	100,6	100,3	100,0	100,4	100,0	100,2	100,3
Ֆինլանդիա	100,3	100,7	100,4	100,2	99,9	100,4	99,3	100,4	100,3	99,5	100,2	100,2	101,8
Ֆրանսիա	99,6	100,4	100,2	100,1	100,1	100,1	99,5	100,6	99,8	100,1	100,2	100,3	101,0
Չեխիա	101,4	100,1	100,2	99,9	100,1	100,0	99,6	99,8	99,6	99,7	100,1	100,1	100,5
Շվեդիա	99,9	100,6	100,5	100,3	100,3	100,2	99,8	100,2	100,4	100,3	100,0	100,2	102,8
Էստոնիա	99,4	99,6	99,5	99,4	100,0	99,8	100,8	99,9	99,8	99,9	99,7	100,1	98,1
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27)	99,4	100,5	100,3	100,3	100,2	100,2	99,5	100,3	100,0	100,2	100,2	100,2	101,4
Հայաստան	101,2	98,2	101,4	103,2	101,6	99,7	97,3	99,6	100,7	100,5	101,2	102,0	106,5
Ռուսաստան	102,4	101,7	101,3	100,7	100,6	100,6	100,6	100,0	100,0	100,0	100,3	100,4	108,8
Բելառուս	104,1	101,2	100,6	100,4	100,3	100,4	100,4	99,8	100,3	100,4	100,3	101,3	110,1
Ուկրաինա	102,9	101,5	101,4	100,9	100,5	101,1	99,9	99,8	100,8	100,9	101,1	100,9	112,3
Ղազախստան	100,3	100,8	100,8	100,8	100,7	100,4	100,3	100,2	100,4	100,4	100,5	100,6	106,2
Վրաստան	101,4	98,7	99,6	100,5	101,2	100,0	96,6	100,0	102,8	102,2	100,2	99,9	103,0
Ղրղզստան	100,5	100,3	99,6	100,4	100,3	99,5	98,6	99,0	100,2	100,1	100,6	100,9	100,0
Սոլդովա	99,9	99,0	99,2	100,3	100,2	99,7	99,4	98,9	100,6	101,5	101,0	100,9	100,4
Տաջիկստան	100,4	100,3	100,5	99,9	100,9	100,8	100,3	100,9	100,4	100,3	100,1	100,1	...
Ադրբեջան	99,4	99,2	99,3	99,8	99,8	99,4	100,8	100,1	100,4	100,4	101,3	100,8	...
Կանադա	99,7	100,7	100,2	99,9	100,7	100,3	99,7	100,0	100,0	99,9	100,5	99,7	101,3
Նորվեգիա	99,6	101,0	100,1	100,4	100,3	100,6	99,4	99,7	101,0	99,7	100,4	100,2	102,4
Բրազիլիա	100,5	100,6	100,2	100,5	100,5	100,4	100,2	100,1	100,2	100,3	100,4	100,4	104,3
Կորեայի Հանրապետություն	100,1	100,7	100,7	100,3	100,0	99,9	100,4	100,4	100,1	99,7	100,2	100,4	102,8
ԱՄՆ	100,4	100,5	100,2	100,2	100,3	100,9	99,8	100,2	100,1	100,1	100,1	99,8	102,7
Թուրքիա	100,3	99,7	101,1	100,0	100,6	100,1	100,2	99,7	100,4	102,4	101,3	100,5	106,5
Ճապոնիա	99,4	99,7	100,3	100,1	99,8	99,8	99,7	100,3	100,0	99,6	99,8

... Տվյալները բացակայում են:

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՆ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՆ-ի կայք էջում գետեղված ցուցանիշների հիման վրա:

<<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2010թ. հունվար-փետրվարին>> մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն <<2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի>>, նախատեսված է 2010թ. մարտի 1-ին (տե՛ս՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 62):